ՄԿՐՏԻՉ ԶԱՐԴԱՐՅԱՆ
ՆՈՐԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՑԱՆՑԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Առևտրային հաղորդացանցերին, նրանց գործարկման պայմաններին և շարժընթացին նվիրված ուսումնասիրությունների ոլորտը ներկայում ձևավորվել որպես ինքնուրույն գիտակարգ՝ ***Ճանապարհագիտություն****։ Սակայն տարբեր գիտական դպրոցներում տարվող նման աշխատանքներում ակնհայտ են մեթոդաբանական տարանջատվածությունը, ներգրավվող աղբյուրների սահմանափակությունն ու դրանց քննական վերլուծության բացակայությունը, ինչը բացասական անդրադարձ է թողնում ամփոփիչ վերակազմությունների և եզրահանգումների վրա։*

Պատմական Հայաստանի և մասնավորապես Սյունիքի ու Մերձավոր Արևելքի հարակից շրջանների առևտրային ճանապարհների բազմատարր ուսումնասիրության շրջանակներում մշակվել է վերջիններիս փաստագրման և համալիր հետազոտման նոր մեթոդաբանություն։ Լայն տեղեկատվական հենքի ընդգրկումն ու վերլուծության արդի միջոցների կիրառումը թույլ է տալիս ճշգրտելու քննվող ճանապարհների աշխարհագրությունը, դրանց շահագործման ժամանակագրությունը և այլն։ Տվյալ մեթոդիկայի փորձարկումը պատմա-աշխարհագրական մի շարք մոդելներում հավաստեցին դրա հուսալիությունը ցանկացած սոցիումի առևտրային առնչությունների լուսաբանման խնդրում, անկախ նրա ժամանակագրական, աշխարհագրական, թե այլ բնութագրերից։ Այս աշխատանքի արդյունքները դրվել են Մետաքսի Ճանապահի առևտրին հին Հայաստանի մասնակցությանը նվիրված ընթացիկ հետազոտության հիմքում։

Բանալի բառեր՝ *Հայաստան, Սյունիք, ճանապարհ, հաղորդացանց, մեթոդաբանություն, առևտուր, Մետաքսի Ճանապարհ, հնագիտություն, աշխարհագրություն, քարտեզ։*

Տարածաշրջանի, երկրի, կամ նրա որևէ ենթաշրջանի թե՛ պատմա-քաղաքական և թե՛ տնտեսական ու մշակութային բնութագրերի լիարժեք գիտական բացահայտման համար հույժ կարևոր է հիշյալ աշխարհագրական (պատմա-աշխարհագրական) միավորների հաղորդակցային ներուժի, նրանց ճանապարհացանցերի ու որոշակի մայրուղիների ուսումնասիրությունը։ Մասնավորապես, պատմագիտության ասպարեզում հետազոտությունների այս ուրույն ճյուղն արդեն իսկ անցել է շուրջ երկդարյա ճանապարհ՝ գրանցելով նշանավոր ձեռքբերումներ։

Հայագիտության շրջանակներում հիշյալ թեմատիկայի նպատակային ուսումնասիրությունը կապվում է նախևառաջ՝ այնպիսի մեծահամբավ անունների հետ, ինչպիսիք են՝ Հ. Մանանդյանը և Ս. Երեմյանը։ Պատմական ճանապարհների հետ կապված տարբեր խնդիրներին անդրադարձել են դեռևս Ղ.

Ալիշանն ու Ս. Լիսիցյանը, այնուհետ՝ Թ. Հակոբյանը, Բ. Հարությունյանը, Է. Դանելյանը և այլք։ Գերազանցապես պատմական գրավոր տվյալների վերլուծության վրա հիմնված այս հետազոտությունների շնորհիվ հնարավոր դարձավ ուրվագծել պատմական Հայաստանի որոշ ճանապարհների ծիրը, բացահայտել երկրի քաղաքական կյանքում տեղ գտած որոշ նշանավոր իրադարձությունների հարաբերական աշխարհագրական բնութագիրը և այլն։

Հիշյալ աշխատությունների մեծ մասն աչքի է ընկնում տարալեզու և տարաժամանակյա պատմական, պատմա-աշխարհագրական գրավոր աղբյուրների խորը վերլուծությամբ, դրանից բխող ամփոփումների տրամաբանությամբ։ Այդուհանդերձ, օգտագործված տեղեկատվական հենքի սահմանափակությունը (միատարրությունը), թեմատիկ ընտրականությունն ու, հաճախ՝ քաղաքականացվածությունը (կողմնակալությունը), բարդացնում, անգամ արգելակում են առաջադրված խնդիրների օբյեկտիվ լուսաբանումը։

Պատմագիտական ուսումնասիրությունների ներկայիս փուլում արդիականանում է որոշակի թեմաների, խնդիրների քննությունը՝ առկա տարաբնույթ տեղեկատվության առավելագույն ընդգրկմամբ, ինչպես և այդ տվյալների արժևորումը՝ համադրելի գիտակարգերի վերլուծական հնարավորությունների լայն օգտագործմամբ։ Նման մոտեցումները, մղելով հետազոտությունները միջգիտակարգային մակարդակ, չեզոքացնում են նրանց արդյունքների վրա առանձին տեղեկատվական աղբյուրներից բխող սուբյեկտիվ գնահատականների ներգործությունը՝ ապահովելով ուսումնասիրությունների ամբողջականությունն ու հիմնավորությունը։ Պատմական ճանապարհների, ճանապարհացանցերի վերջին երեք տասնամյակների նպատակային միջազգային հետազոտությունները ցուցադրում են այսօրինակ հետազոտությունների արդյունավետությունը։ Դրանք արդեն իսկ հանգեցրել են պատմա-աշխարհագրական նոր գիտակարգի՝ **Ճանապարհագիտության (Roadology)** ձևավորմանը։

Պատմական ճանապարհագիտության նկատմամբ միջազգային հետաքրքրության ներկայիս ալիքը, զուտ ակադեմական (գիտական) չափումից բացի, թելադրված է նաև որոշակի կիրառական (արդի աշխարհա-տնտեսական ու աշխարհա-քաղաքական, ճանապարհաշինական, զբոսաշրջային և այլ) նկատառումներով։

Միաժամանակ, այս թեմատիկայի նորագույն հետազոտությունները, իրենց ողջ կարևորությամբ և արդյունքների հնչեղությամբ հանդերձ, ցուցադրում են հիմնային չափորոշիչների ակնհայտ խայտաբղետություն, ինչը մի շարք դեպքերում հանգեցնում է հետազոտման արդյունքների աղավաղմանը, ինչպես պատմա-աշխարհագրական, այնպես էլ հատկապես բուն պատմական արժևորման մակարդակներում։

Գիտական նոր մոտեցումների կիրառումը պատմա-աշխարհագրական և, մասնավորապես, կոմմունիկացիոն ցանցերի հետազոտության ոլորտում՝ ենթադրում է համապատասխան ընդհանրական՝ ***ունիֆիկացված մեթոդաբանության*** մշակում և կիրառում, ինչը թույլ է տալիս խորացնել խնդրո առարկայի համապարփակ քննությունը, հասցնելով այն ներկայիս ***«ուղղություն»*** մակարդակից մինչև բուն ***«ճանապարհը»:***

Այս նպատակով մշակված մեթոդաբանության հիմնական տարրերն են.

1. Աշխարհագրական (տոպոգրաֆիկ, օրոգրաֆիկ և այլ) և կլիմայական (ներառյալ հնա-բուսաբանական և հնա-կենդանաբանական տվյալները) հետազոտություն (դաշտային, կամերալ, կոսմո- և աերո-լուսանկարների վերլուծություն և այլն),

2. Հնագիտական հետազոտություն (հետախուզում, պեղումներ, չափագրություններ), տարաժամանակյա բոլոր հուշարձանների և հնագիտական այլ տվյալների ընդգրկմամբ,

3. Պատմա-աղբյուրագիտական հետազոտություն, տարաժամանակյա ողջ տեղեկատվության ընդգրկմամբ,

4. Ազգագրական և տոպոնիմիկ ուսումնասիրություն

5. Կուտակված տվյալների ողջ համալիրի խմբավորում և համակարգում (բանկի ձևավորում),

6. Տվյալների բանկի բոլոր խմբերի միջանցուկ, ինչպես և ժամանակագրորեն խմբավորված (փուլային) քարտեզագրում,

7. Տվյալների բանկի համահարաբերակցված արժևորում. պատմա-մշակութային, պատմա-տնտեսական և, ի վերջո, պատմա-քաղաքական։

Հաշվի առնելով աշխատանքների մեծ ծավալը, նրա ուսումնասիրության բազմատարրությունն ու բարդությունը՝ իրատեսական է նման հետազոտության անցկացումն՝ ըստ առանձին պատմա-աշխարհագրական շրջանների, նկատի ունենալով առանձին թեմատիկ ուսումնասիրությունների հետագա մեկտեղումը։

Այս առումով, Սյունիք նահանգը գնահատելի է որպես Հայաստանի պատմական ճանապարհացանցի հետազոտման շահեկան «մոդուլ», քանի որ.

- Այստեղ պահպանվել են որոշ հին ճանապարհների բավականաչափ երկար հատվածներ (Աղ. III, նկ. 5);
- քարավանատներ (Սելիմ-1, Սելիմ-2, Արգիճի, Սյունիքի լեռնանցքի, Հարժիս
  1-4 և այլ) (Աղ. I; Աղ. II, նկ. 1-3);
- կամուրջներ (Աղ. I);
- ճանապարհացույց (ուղեցույց) քարակոթողներ (Աղ. III, նկ. 4);
- առկա են ազգագրական և տոպոնիմիկ տվյալներ (ինչպես օրինակ՝ «Մաղավուզի ճանապարհ», «Նախիջևանի ձոր» և այլ);
- հարուստ և տարաժամանակյա աղբյուրագիտական տվյալներ;
- հնակլիմայական հետազոտությունների արդյունքներ;
- վերջապես, նահանգը՝ աշխարհագրորեն և պատմականորեն՝ կարևոր հանգույց է հանդիսացել Հարավ-Հյուսիս և Արևելք-Արևմուտք ուղղություններով ընթացող միջտարածաշրջանային ճանապարհների և դրանցով ընթացող տարանցիկ առևտրի համար։

Սյունյաց ճանապարհների նպատակային հետազոտությունը մենք սկսել ենք դեռևս 2005 թ.-ից՝ հայ-ամերիկյան «Որոտան» (2005-2008) և «Սյունիք» (2015-2016) բազմաճյուղ հնագիտական ծրագրերի շրջանակներում։ 2010 և 2011 թթ.-ին ընթացել են նաև թեմատիկ հետախուզական ուսումնասիրություններ՝ նպատակաուղղված նահանգի որոշակի պատմական ճանապարհների ճշգրտմանը[1]։ Հիշյալ աշխատանքների արդյունքում **առարկայորեն** բացա-

1 Հիշյալ ծրագրերի շրջանակներում ձեռքբերված հիմնական գիտական արդյունքների

հայտվել են Սյունիքի Ծղուկ և Այլախ գավառների հիմնական ճանապարհները, նրանց վրա տեղակայված որոշ բնակավայրերի կոմունիկացիոն և առևտրային գործառույթները, այստեղից՝ դեպի Սևանի ավազանն ու Արցախ տանող ուղիները։

Նշված ձեռքբերումների հպանցիկ հիշատակմանը զուգահեռ կարևոր ենք համարում շեշտել, որ տարված ուսումնասիրությունների ընթացքում իր օբյեկտիվությունը հաստատեց վերը ներկայացված մեթոդաբանությունը։ Վերջինս կարող է հուսալի հիմք ծառայել ճանապարհների, ճանապարհացանցերի խորացված ուսումնասիրության համար՝ անկախ վերջիններիս թե՛ աշխարհագրական, թե՛ պատմա-քաղաքական և թե՛ մշակութային կոնտեքստից։

Այժմ պատմական Սյունիքի ճանապարհացանցի հետազոտությունները թևակոխում են աշխատանքային նոր փուլ։

ЗАРДАРЯН МКРТИЧ О., ЕНГИБАРЯН НОРА Г., САРКИСЯН ГАМЛЕТ Г. - ВОПРОСЫ ИССЛЕДОВАНИЯ КОММУНИКАЦИОННОЙ СЕТИ ДРЕВНЕГО СЮНИКА (методология) - Изучение торговых коммуникационных сетей, условий и динамики их функционирования в последнее время приобрело характер самостоятельной дисциплины (*Roadology*). Однако, в работах различных научных школ посвященных данной проблематике проявляется методологическая раздробленность, ограниченность привлекаемых источников и отсутствие критической оценки данных, что негативно отражается на результатах итоговых реконструкций и обобщений.

При многовекторном исследовании дорог древней Армении, в частности - Сюника, равно как и сопредельных регионов Ближнего Востока, была разработана методика регистрации и комплексного изучения торговых путей. Привлечение широкого спектра источников и применение современных методов анализа данных, позволили определить географию конкретных дорог, динамику их эксплуатации и пр. Апробация

մասին՝ տես. **Alcock S. E., Cherry J. F., Tonikyan A. V., Zardaryan M. H.** The Vorotan Project, Armenia. In: «In the Field». The Archaeological Expeditions of the Kelsey Museum. Kelsey Museum Publications # 4. Ann Arbor. Michigan. 2006; **Zardaryan M. H., Tonikyan A. V., Alcock S. E., Cerry J. F.** Les Investigations du Project «Vorotan» dans la Region de Syunik. In: Les Dossiers d´Archeologie. Dijon. Mai-Juin 2007. # 321; **Зардарян М. О., Мелконян С. А., Тоникян А. В., Элкок С. Е., Черри Д. Ф.** Исследования проекта «Воротан» в Сюникском регионе Армении. В: Международная научная конференция «Археология, этнология, фольклористика Кавказа». Батуми. 2006; **J. F Cherry, S. W. Manning, S. E. Alcock, A. V. Tonikyan, M. H. Zardaryan.** Radiocarbon Dates for the Second and First Millennia B. C. from the Southern Armenia. Preliminary Results from the Vorotan Project, 2005-2006. «Aramazd». Armenian Journal of Near-Eastern Studies. 2007, Vol. II; **Մելքոնյան Ս.** 2005-2006 թթ. Շաղաթ-1 և 3 հուշարձանախմբի միջինբրոնզեդարյան բնակատեղիի պեղումների արդյունքներից. Հին Հայաստանի մշակույթը. Հատ. 14. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ. Երևան 2008; **Հովսեփյան Ռ., Մելքոնյան Ս.** Շաղաթ-1 միջինբրոնզեդարյան բնակավայրում հնաբուսաբանական նյութերի առկայության անալիզի տվյալները. Հին Հայաստանի մշակույթը. Հատ. 14. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ. Երևան 2008; **Զարդարյան Մ., Տոնիկյան Ա., Ալքոք Ս., J. Չերրի Ջ., Հակոբյան Ա..** Անտիկ Սյունիքի ուսումնասիրությունը «Որոտան» ծրագրի շրջանակներում. «Խալդյան զորությամբ ...». Հոդվածների ժողովածու նվիրված Բ. Պիոտրովսկու 100-ամյակին. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ. Երևան 2010; **Zardaryan M., Mkrtchyan R., Akopian A.** Burial as a biographic «dossier» (Multi-disciplinary investigation of Uits, Syunik Armenia). In: International Conference «The Historical and Cultural Heritage of the Armenian Highland». Yerevan - Stepanakert. June 24 - July 01, 2012, և այլ։

методики в изучении ряда историко-географических *моделей* подтвердила ее применимость в исследовании торгового взаимодействия различных по хронологии и локализации социумов. Результаты этих разработок легли в основу исследования роли Армении в транс-континентальной торговле на Великом Шелковом пути.

Ключевые слова: Армения, Сюник, дорога, коммуникации, методология, торговля, Шелковый Путь, археология, география, карта.

ZARDARYAN MKRTICH H., YENGIBARYAN NORA, SARGSYAN HAMLET - ON THE INVESTIGATION OF COMMUNICATION NETWORK OF ANCIENT SYUNIK (methodology) - In last two decades the investigation of trade communication networks, conditions and dynamic of their exploitation gained the status of specific discipline (*Roadology*). Meanwhile, in a number of studies dedicated to this topic the methodological indistinctness, limitation of sources and lack of critical analyses of data are obvious. That makes a negative impact on final reconstructions and generalizations.

In frames of the multi-vector investigation of road networks of Ancient Armenia and particularly Syunik Province, as well as the adjacent regions of the Near East, the methodology of successive registration and complex analyses of evidence was elaborated. The involvement of wide spectrum of data, application of advanced methods of cartography and registration, had brought to precise reconstruction of ancient roads, revealed the dynamic of their exploitation etc. The use of the presented methodology in frames of research of different historical and geographical *models* corroborates its reliability for investigations of trade interactions of the past, irrespective of chronology, geographic location or social structure of the object. The results of these elaborations had been involved in wide diachronic investigation of the role of Ancient Armenia in the structure of trans-continental trade by the Great Silk Road.

Key words: Armenia, Syunik, road, communications, methodology, trade, Silk Road, archaeology, geography, map.

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Աղյուսակ II. Նկ. 1-3. Հարժիսի քարավանատները

Աղյուսակ I. Սյունիքի միջնադարյան քարավանատներն ու կամուրջները

Նկ. 4

Նկ. 5